ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

<<ԱՐԵՎՄՏՅԱՆ ԿԱՆԻ>>

ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, Կոտայքի մարզ, Մրգաշեն 7 փող., 6 շ., բն. 3 (2408), Հեռ. +374 93 860339 artak78@yandex.com

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
ՄԱՍԻՍ ԽՈՇՈՐԱՑՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԴԱՎԻԹ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻՆ

ՀԱՐԳԵԼԻ ՊԱՐՈՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Տեղեկացնում եմ, որ դեռևս 2022թ-ին, «ԱՐԵՎՄՏՅԱՆ ԿԱՆԻ» ՍՊ ընկերությունը դիմել էր Մասիս և Արտաշատ համայնքների ղեկավարներին՝ ՀՀ Արարատի մարզի Նորամարգ-Հրազդանի կոպճային ավազների երևակման սահմաններում 2022-2023թթ երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ իրականացնելու նպատակով:

Սահմանված կարգով երկրաբանական ուսումնասիրություններ իրականացնելու թույլտվություններ ստանալուց և համապատասխան աշխատանքներ իրականացնելու արդյունքում, ՀՀ ՏԿԵ նախարարի 17.07.2023թ. թիվ 1391-Ա հրամանով հաստատվել են ավազի հանքավայրի պաշարները:

Ներկայումս Ընկերությունը ցանկություն ունի շարունակելու ընդերքօգտագործման գործունեությունը և նախատեսում է ՇՄԱԳ դրական եզրակացություն ստանալուց հետո դիմել ՏԿԵՆ՝ ընդերքի արդյունահանման թույլտվություն ստանալու նպատակով, որի համար, ի թիվս այլնի անհրաժեշտ է ապահովել նաև հանրային իրազեկման և հանրային քննարկումներ կազմակերպելու օրենսդրությամբ սահմանված պահանջները ևս:

Նկատի ունենալով, որ ընդերքօգտագործման նպատակով հայցվող տարածքն ընդգրկում է ՀՀ Արարատի մարզի երկու համայնքների՝ Մասիս խոշորացված համայնքի Նորամարգ և Արտաշատ խոշորացված համայնքի Հովտաշեն բնակավայրերը, ուստի ՀՀ Կառավարության 2014թ. նոյեմբերի 19-ի թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված Կարգի 7-

րդ կետի համաձայն, **հանրային ծանուցման և քննարկումների կազմակերպումն իրականացնում են ձեռնարկողը և համայնքների ղեկավարները՝ համատեղ** (2 հողամասերն էլ սեփականության իրավունքով պատկանում են Ընկերության մասնակից՝ Ռուզվելտ Մազմանյանին):

Բացի այդ, նկատի ունենալով, որ երկրաբանական ուսումնասիրությունների համար 2022թ. անցկացված երկու հանրային լսումներն իրականացվել են Մասիս համայնքի Նորամարգ վարչական շրջանում, ինչպես նաև այն, որ ավազի վերամշակման և պահեստավորման համար անհրաժեշտ ենթակառուցվածքների կառուցումը նախատեսվում է իրականացնել Հովտաշեն վարչական շրջանում ընգրկված հողամասում, **ուստի խնդրում եմ Ձեր համաձայնությունը՝ արդյունահանման փուլի հանրային քննարկումները ՀՀ Արարատի մարզի Արտաշատ խոշորացված համայնքի Հովտաշեն բնակավայրում կազմակերպելու վերաբերյալ:**

Պարտավորվում եմ Արտաշատ համայնքի ղեկավարի կողմից հանրային լսումների վայրն ու օրը սահմանելուց անմիջապես հետո, անհապաղ տեղեկացնել Ձեզ՝ հանրային քննարկումներին Մասիսի համայնքի և Նորամարգ բնակավայրի ներկայացուցիչների լսված լինելու իրավունքը ևս պատշաճ ապահովելու համար:

Կից ներկայացնում եմ՝

- Ընկերության պետռեգիստրի վկայականը՝ « 2 » թերթ,
- Հողամասերի սեփականության իրավունքի վկայականների և սեփականատիրոջ անձնագրի պատճենները՝ « 6 » թերթ,
- Նախատեսվող գործունեության հակիրճ նկարագիրը՝ « 6 » թերթ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ՏՆՕՐԵՆ՝ ԱՐՏԱԿ ՂՈՒԿԱՍՅԱՆ

«18» 08 2023թ.

ԱՐԵՎՄՏՅԱՆ ԿԱՆԻ ԱՐԵՎԱՍՏԱՆ ԿԱՆԻ AREVMTYAN KANI 03560015